

RSC BLOG

No. 6 | 25 January 2016

Գոտեպնդվե՛ք, գարուն է գալիս. «արաբական գարնան» դասերը ետխորհրդային երկրների համար Միքայել Զոլյանը

Արդո՞ք հնարավոր է «Ետխորհրդային գարուն»

Հինգ տարի առաջ, 2011 թ. հունվարի 25-ին սկսվեց հեղափոխությունը Եգիպտոսում որը դարձավ յուրահատուկ ջրբաժան «Արաբական գարնան» համար: Այսօր, մինչդեռ «Արաբական Գարնան» արդյունքում սկիզբ առած գործընթացները շարունակում են ցնցել Մերձավոր Արևելքը, հասունանում են նոր ցնցումներ աշխարհի մեկ այլ խնդրահարույց տարածաշրջանում՝ նախկին ԽՍՀՄ երկրներում:

Ընդամենը վերջին մեկ-երկու ամիսների ընթացքում մենք ականատես դարձանք հակակառավարական հզոր ցույցերի Մոլդովայում,¹ զանգվածային բողոքների Ադրբեյջանի մարզերում,² արտահերթ խորհրդարանական ընտրությունները մասին հայտարարության Ղազախստանում:³

Այս ամենը՝ նավթի գահավիժվող գների և ետխորհրդային երկրների ազգային տարադրամների արժեզրկման ֆոնին: Լուրջ հիմքեր կան ակնկալելու, որ անկայունության այս միտումը խորանալու է: Գործընթացները բոլոր ետխորհրդային երկրներում այս կամ այն չափով կախված են տարածաշրջանային տնտեսական և քաղաքական հսկայից՝ Ռուսաստանից: Իսկ Ռուսաստանը, մեղմ ասած, լավագույն ժամանակները չի ապրում. մի կողմից՝ ամենալուրջ տնտեսական ճգնաժամն անցյալ դարի ավարտից ի վեր, մյուսից՝ պահպանվող հակամարտությունն Արևմուտքի հետ:

«Արաբական գարունը» ևս մեկ անգամ հաստատեց այն իրողությունը, որը քաջ հայտնի է պատմաբաններին և քաղաքագետներին, բայց, ցավոք, հաճախ անտեսվում է քաղաքական առաջնորդների կողմից. բռնապետական վարչակարգերը խիստ փխրուն են: Կայունությունը, որը հաճախ վերագրվում է ավտորիտար վարչակարգերին, երևույթական է: Ինչպես ցույց տվեց «Արաբական Գարունը», տասնամյակներով գոյատևած ավտորիտար

¹ Ciorici, Dumitru, “Explanation: What is happening in Moldova,” Blog post, 21 January 2016.

<https://medium.com/@dumitruciorici/explanation-what-happens-in-moldova-9ca3d94d36ca#.9cn6ovoqy>

² De Waal, Thomas, “Azerbaijan’s Perfect Storm,” *Carnegie Europe*, 19 January 2016.

<http://carnegieeurope.eu/strategieurope/?fa=62501>

³ Auyezov, Olzhas, “Kazakhstan election: Snap poll called as President Nursultan Nazarbayev bids to extend

his 27-year rule,” *The Independent*, 20 January 2016. www.independent.co.uk/news/world/asia/kazakhstan-election-snap-poll-called-as-president-nursultan-nazarbayev-bids-to-extend-his-27-year-a6823971.html

վարչակարգերը մի քանի շաբաթների և ամիսների ընթացքում կա՛մ տապալվում էին, կա՛մ հայտնվում քաղաքացիական պատերազմի կողմերից մեկի կարգավիճակում: Կարծում եմ, հենց սա է այն հիմնական դասը, որը պետք է «Արաբական գարնանից» քաղեն ետխորհրդային երկրների ղեկավարները և քաղաքական վերնախավը. ավտորիտար համակարգերի կայունությունը պատրանք է:

Սա ճիշտ է ցանկացած ավտորիտար համակարգի համար: Սակայն, հենց ետխորհրդային երկրների իշխանությունները պետք է հատկապես ուշադիր լինեն «Արաբական գարնան» դասերի նկատմամբ, քանի որ նմանությունները Մերձավոր Արևելքի և ետխորհրդային երկրների քաղաքական համակարգերի միջև ակնհայտ են: Այն վարչակարգերը, որոնք գոհ գնացին «Արաբական Գարնանը», շատ հարցերում միանգամայն տարբեր էին, բայց նրանց միջև կային մի քանի կարևոր ընդհանրություններ: Բոլոր այդ վարչակարգերն ավտորիտար բնույթ ունեին, դրանք ղեկավարվում էին տասնամյակներով իշխանություն գլուխ կանգնած առաջնորդների (կամ «գահաժառանգների») կողմից, ընդ որում վարչակարգը խիստ անձնավորված էր: Բացի այդ, գրեթե բոլոր այդ վարչակարգերը ձևով ժողովրդավարական էին, այսինքն ձգտում էին այս կամ այն չափով պահպանել ժողովրդավարության պատրանքը, այնտեղ առկա էին ձևով ժողովրդավարական ընթացակարգեր (օրինակ, ընտրություններ), թեև դրանք իրական ազդեցություն չէին թողնում որոշումների ընդունման վրա: Եվ, վերջապես, այս երկրների մեծ մասում կոռուպցիան ընդունել էր այնպիսի չափեր, որ դարձել էր քաղաքական և տնտեսական համակարգի մի մասը:

Կարծում եմ դժվար չէ նկատել, որ այս նկարագրությունը կարելի է տարածել հետխորհրդային երկրների մեծ մասի վրա: Ետխորհրդային տարածությունը, թերևս, աշխարհի միակ տարածաշրջանն է, Մերձավոր Արևելքից և Հյուսիսային Աֆրիկայից բացի, որտեղ առկա է կոռումպացված, ձևով ժողովրդավարական, բայց բովանդակությամբ բռնապետական վարչակարգերի նման կուտակում: Ավելին, կա ևս մեկ առանձնահատկություն, որը միավորում է ետխորհրդային երկրները և արաբական աշխարհը: «Արաբական գարնան» երկրների նման, վերջին տասնամյակների ընթացքում ետխորհրդային երկրների իշխանությունները ունեցել են մեղմ ասած համեստ հաջողություններ իրենց երկրների

տնտեսության և հասարակության արդիականացման գործում: Այս առումով մերձավոր-արևելյան և ետխորհրդային բռնապետությունները տարբերվում են աշխարհի այլ մասերում առկա որոշ ավտորիտար վարչակարգերից, որոնք զգալի հաջողությունների են հասել իրենց երկրների արդիականացման գործում (օրինակ, Հարավ-Արևելյան Ասիայի որոշ երկրներում): Այնպես որ, կարծում եմ, եթե «Արաբական գարնունը» կարող է կրկնվել աշխարհի որևէ տարածաշրջանում, ապա ամենահավանական «թեկնածուն», թերևս, հենց ետխորհրդային տարածությունն է:

Իհարկե, քաղաքական գործընթացների վերաբերյալ կանխատեսումներ անելն անշնորհակալ գործ է: Դա հատկապես ճիշտ է ավտորիտար համակարգերի դեպքում: Քաղաքագետները գիտեն, որ, հակառակ տարածված պատկերացումների, ժողովրդավարական համակարգերը շատ ավելի կանխատեսելի են, քան ավտորիտար համակարգերը: Ժողովրդավարական համակարգում հաճախ դժվար է կանխատեսել ընտրությունների արդյունքները, բայց մնացած ամեն ինչը բավականին կանխատեսելի է. ով էլ, գա իշխանության ընտրությունների արդյունքում, երևի ներքին և արտաքին քաղաքականության հիմնարար տարրերը չեն փոխվում: Միանգամայն այլ է իրավիճակը ավտորիտար համակարգերում: Միակ բանը, որ կանխատեսելի է, ընտրության արդյունքներն են, քանի որ գրեթե միշտ հաղթում է իշխող կուսակցությունը, հաճախ ձայների նույն տոկոսներով: Սակայն վարչակարգի ճակատագիրը գրեթե անխանխատեսելի է, քանի որ այն կախված է բազմաթիվ դժվար կանխատեսելի գործոններից՝ առաջնորդի առողջական վիճակից կամ ընտանիքի անդամների հետ փոխհարաբերություններից մինչև իրադրությունը էներգակիրների համաշխարհային շուկայում: Պատմության մեջ լի են օրինակները, երբ անսասան թվացող ավտորիտար վարչակարգը քայքայվել է օրերի ընթացքում, և, ընդհակառակը, երբ խիստ թույլ և վտանգված թվացող վարչակազմը գոյատևել է տարիներ և տասնամյակներ:

Այնպես որ յուրաքանչյուր առանձին վերցրած երկրի դեպքում կանխատեսումներ անելը բավականին դժվար է: Սակայն, եթե խոսքը վերաբերում է ետխորհրդային տարածաշրջանին ամբողջությամբ, կարելի է խոսել որոշակի միտումների մասին, որոնք գրեթե անհնար է անտեսել: Եվ եթե մենք հաշվի առնենք այն գործընթացները, որոնք ընթանում են

ետխորհրդային տարածաշրջանում այսօր, ակնհայտ է դառնում, որ «ետխորհրդային գարնան» հավանականությունը երբեք այնքան բարձր չի եղել, ինչպես հիմա:

Ինչ ո՞ւ հիմա

Անգամ ավելի բարենպաստ տարիներին ետխորհրդային երկրների մեծ մասում առկա էին լուրջ խնդիրներ՝ կապված արդյունավետ կառավարման և տնտեսական զարգացման հետ: Կորուպցիան, անհավասարությունը, տեխնոլոգիական հետամնացությունը, բոլոր այս խնդիրները չիէն լուծվում անգամ այն ժամանակ, երբ աշխարհաքաղաքական և տնտեսական միտումները շատ ավելի նպաստավոր էին: Մակայն, այսօր, երբ ածխաջրածնային հումքի գները միջազգային շուկայում անկում են ապրում, իսկ Ռուսաստանի տնտեսությունը ճգնաժամի մեջ է, ետխորհրդային երկրները կանգնած են առավել լուրջ վտանգների առաջ:

Այն երկրները, որոնց տնտեսությունը հիմնված է հումքի արտահանման վրա (Ռուսաստանից բացի այդ խմբի մեջ են մտնում Ղազախստանը, Ադրբեյջանը և Թուրքմենստանը), այսօր իրենց վրա են գում էներգակիրների գների անկման անմիջական հետևանքները: Ճիշտ է, հնարավոր չէ կանխատեսել, թե որքան կտևի և որքան խորը կլինի նավթի գների ներկա անկումը: Մակայն, ակնհայտ է, որ անգամ եթե նավթի գների որոշակի ան արձանագրվի, այն դժվար թե վերադառնա մի քանի տարի առաջ գոյություն ունեցած մակարդակին: Եթե նավթի գինը վերադառնա մեկ բարելի համար 50-60 դոլար նիշին, դրա շնորհիվ դարձյալ մրցունակ կդառնա նավթի արդյունահանում թերթաքարային եղանակը, ինչի արդյունքում գները դարձյալ կարող են իջնել: Այնպես, որ ոչ միայն կարճաժամկետ, այլև ավելի երկարաժամկետ կտրվածքով նավթարդյունահանող երկրները կարող են մոռանալ այն գերշահույթների մասին, որոնք արձանագրվում էին ընդամենը մի քանի տարի առաջ:

Նախորդ տարիների ընթացքում նավթ արդյունահանող երկրներում թե՛ բնակչությունը, թե՛ բիզնեսը, թե՛ պետական ապարատը սովորել էին պետական ծախսերի բարձր մակարդակին, որը պայմանավորված էր նավթային գերշահույթներով: Առանց այդ գերշահույթների իշխանությունների համար առավել դժվար կլինի շարունակել «գնել» ոչ միայն բնակչության լայն շերտերի, այլև տնտեսական և քաղաքական վերնախավի հավատարմությունը, ինչպես դա արվել էր տարիների ընթացքում: Ավելին, գերշահույթների տարիներին պետական

ապարատը զգալիորեն ուրճացվել է, և այն պահպանելու համար իշխանությունները ստիպված կլինեն ռեսուրսներ հայթայթել բնակչությունից, ինչը լրացուցիչ դժգոհությունների առիթ կարող է տալ:

Ինչ վերաբերում է Հետխորհրդային այն երկրներին, որոնք գուրկ են ածխաջրածնային զգալի ռեսուրսներներից, նրանք ևս բախվելու են նման խնդիրների: Այս երկրների տնտեսությունն անուղղակի կախվածության մեջ է եղել իրենց հարևանների (առաջին հերթին Ռուսաստանի) նավթային գերշահույթներից: Որոշ դեպքերում այս երկրների տնտեսությունը զգալի չափով հիմնված է եղել իրենց տարածքով էներգակիրների տարանցումից (ինչպես օրինակ Բելառուսի, կամ, որոշ չափով նաև Վրաստանի դեպքում): Այլ դեպքերում տնտեսության մեջ զգալի դեր է խաղում էժան աշխատուժի արտահանումը Ռուսաստան (Հայաստան, Մոլդովա, Տաջիկստան, Դրոգստան, որոշ չափով Ուզբեկստան): Տարանցումը և աշխատուժի արտահանումը այս երկրների տնտեսություններում ինչ-որ չափով նույն դերն են խաղացել, ինչ էներգակիրներ արտահանող երկրներում՝ էներգակիրներից ստացված շահույթը: Դրանք օգնել են ապահովել տնտեսական ակտիվության որոշակի մակարդակ և լցնել պետական բյուջեն՝ առանց լուրջ տնտեսական և քաղաքական բարեփոխումներ իրականացնելու:

Աշխատանքային միգրացիան ետխորհրդային երկրներում ևս մեկ լրացուցիչ առավելություն ուներ իշխանությունների տեսակետից: Դրա շնորհիվ երկրից հեռանում էր երիտասարդ գործազուրկ տղամարդկանց զգալի մասը, որոնք երկրում մնալով կարող էին դառնալ հակաիշխանական ընդվզումների շարժիչ ուժը: Եթե Մուհամեդ Բուազիզին, որի ինքնահրկիզմամբ սկսվեց հեղափոխությունը Թունիսում, ծնվեր Հայաստանում կամ Տաջիկստանում, նա ամենայն հանավանակությամբ երբեք ստիպված չէր լինի դիմել նման ծայրահեղ քայլի, քանի որ գործազուրկ մնալու պարագայում պարզապես արտագնա աշխատանքի կմեկներ Ռուսաստան: Հետևաբար, նաև հետխորհրդային երկրների առաջնորդները կարող էին համեմատաբար հանգիստ լինել, որ չեն արժամանա Թունիսի նախագահ Բեն-Ալիի ճակատագրին: Այսօր, սակայն, ռուսական տնտեսությունը ճգնաժամի և ռուբլու արժեզրկման պարագայում, նկատվում է արտագնա աշխատողների դրամական փոխանցումների կտրուկ անկում: Իսկ, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ տասնյակ և հարյուր հազարավոր գործազուրկ երիտասարդ

տղամարդկանց վերադարձը իրենց երկրներ իշխանությունների համար, կարծում են, ակնհայտ է:

Բռնապետը երկրնտրանքի առջև

Այս նոր իրականության մեջ ետխորհրդային երկրների իշխանավորները ստիպված կլինեն գործ ունենալ այնպիսի լրջագույն վտանգների հետ, որոնց նմանների հետ չեն առնչվել ԽՍՀՄ փլուզումից և ետխորհրդային առաջին տարիներից ի վեր: Ընդ որում, այս միտումները, թեկուզև տարբեր չափով, ազդում են բոլոր ետխորհրդային երկրների վրա՝ անկախ նրանից թե նրանք ինչպիսի արտաքին քաղաքական կողմնորոշում ունեն՝ ռուսամետ, արևմտամետ թե «կոմպրոմիսներ» կամ «բազմավեկտորային»: Կորուպցիան դարձել է տնտեսական և քաղաքական համակարգի բաղկացուցիչ մասը ոչ միայն առավել բռնապետական կարգեր ունեցող երկրներում, այնպես էլ այնպիսի երկրներում, որոնց քաղաքական համակարգը համեմատաբար ավելի ժողովրդավարական է: Եթե հասարակությունը որոշ չափով պատրաստ էր համակերպվել կորուպցիայի բարձր մակարդակի հետ տնտեսական ավելի բարենպաստ պայմաններում, տնտեսական անկման պայմաններում կորուպցիայի տնտեսական և քաղաքական գիւղ կարող է դառնալ չափազանց բարձր, ինչը կարող է հանգեցնել սոցիալական պայթյունի: «Էլեկտրական Երևանը» Հայաստանում և «ՊԼՏՏՈՆ» համակարգի դեմ շարժումը Ռուսաստանում դարձան անցյալ տարվա ամենալայն լուսաբանված սոցիալական բողոքի շարժումները, սակայն դրանք ամենևին էլ միակը չէին ետխորհրդային տարածքում: Այս երկու դեպքում էլ այդ շարժումներն ընդհուպ մոտեցան, բայց չանցան այն սահմանը, որը բաժանում է սոցիալական պահանջները և կորուպցիայի դեմ պայքարը քաղաքական շարժումից: Այս տարի՝ Մոլդովայում մենք արդեն տեսանք, թե ինչպես կորուպցիայի դեմ պայքարող շարժումը կարող է վերածվել քաղաքական շարժման:

Ճիշտ է, Մոլդովայի դեպքում շարժման ծավալմանը նպաստեց այն, որ Մոլդովան ետխորհրդային այլ երկրների համեմատ առավել ժողովրդավարական քաղաքական համակարգ ունի, և ձգտում է համապատասխանել եվրոպական չափանիշներին, ինչի շնորհիվ իշխանությունն ի վիճակի չէ բողոքներին պատասխանել բռնաճնշումներով: Սակայն, դա չի նշանակում, որ ավելի ավտորիտար և ռեպրեսիվ համակարգեր ունեցող երկրներում իշխանության դեմ ուղղված զանգվածային

բողոքները հնարավոր չեն: Ընդհակառակը, այն երկրներում որտեղ ճնշումների են ենթարկվում քաղաքական ընդդիմությունը, ազատ մամուլը և քաղաքացիական հասարակությունը, իշխանություններն իրենք իրենց զրկում են հանրային դժգոհությունը դեպի բողոքի համեմատաբար անվտանգ դրսևորումներ ուղղորդելու հնարավորությունից: Ինչպես ցույց է տալիս «Արաբական գարնան» փորձը, նման երկրներում, զանգվածային բողոքներ լինում են ավելի հազվադեպ, սակայն եթե գործը հասնում է զանգվածային ընդվզման, ապա այն հղի է առավել վտանգավոր հետևանքներով:

Այս ամենը հաշվի առնելով, պարզ է դառնում, որ 2016 թ.-ին ետխորհրդային առաջնորդներից շատերը կանգնելու են ճգնաժամ ապրող ավտորիտար համակարգի համար բնորոշ երկրնտրանքի առջև: Նրանք կամ պետք է «ձգեն պտուտակները», ինչպես ասում են Ռուսաստանում, այսինքն խստացնեն համակարգի ռեպրեսիվ բնույթը, կամ դիմեն բարեփոխումների, ինչը նշանակում է համակարգի ազատականացում: Բռնաճնշումները կարող են որոշակի արդյունքներ տալ կարճաժամկետ կտրվածքով, բայց դրանք կարող են նաև բերել առավել մեծ դժգեհության և հակաիշխանական բողոքի առավել ագրեսիվ դրսևորումների: Մյուս կողմից ազատականացումը կարող է ուժեղացնել ընդդիմությանը, իշխանությունից օտարել նրան ավանդաբար աջակցող խմբերին և ստեղծել հակամարդի թուլացման տպավորություն, ինչը ևս կարող է հանգեցնել զանգվածային ընդվզման:

Ցանկացած դեպքում, ինչպես էլ այս իրավիճակում վարվեն ետխորհրդային երկրների իշխանավորները, ակնհայտ է, որ այն ավտորիտար և կոռումպացված քաղաքական համակարգերը, որոնք ձևավորվել են ԽՍՀՄ նախկին տարածքում կարիք ունեն լուրջ բարեփոխումների: Այնպես որ, եթե ետխորհրդային երկրների քաղաքական վերնախավերը ուզում են խոսափել իրենց երկրներում «Արաբական գարնան» կրկնությունից, պետք է կարողանան ճիշտ դասեր քաղել «Արաբական գարնան» փորձից: